

Տ. ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԾՄՈՒՄ ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻՒՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 մարտի 2005 թ.)

«Երկինք աթոռ Իմ ևն՝ և երկիր պայուսան-
դան որից Իմոց որպիսի՝ լրուն շինհցէք Ինձ...
և Ես յո՞ւ հայեցայց, եթէ ոչ ի հեզու ևս ի խո-
նարիս»:

(Եսայի ԿԶ 1-2)

«Յանուն Նօր և Որդոյ և Հոգուն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացայներ, այս խոսքերը, որոնք այսօր ընթերցվեցին Սուրբ Գրքից, Եսայի մարգարեի միջոցով մարդկությանը, այն ժամանակվա մարդկությանը դիմելով ասում է Աստված, թե երկինքը Իմ աթոռն է, իսկ երկիրը՝ Իմ ուժերի պարզանդանը, ինչպիսի լրուն դուք կարող եք պարզապես Ինձ համար, ինչպիսի փառավոր ու մեծ դաճար կարող եք պարզապես Ինձ համար, որ Ես գեղավորվեմ այդ դաճարի մեջ:

Աստված սակայն նաև ասում է, որ եթե Ես ցանկանամ, կարող եմ գեղավորվել ամենա- աղբար, ամենահեեկ, ամենախոնարի մարդկանց մեջ անգամ:

Այսօր Մեծ Պահքի վեցերորդ կիրակին է, և մեր Եկեղեցու հայրերն այսօրվա կիրակին կոչել են Գալսդյան կիրակի: Հավանաբար այդ անունը նրանք վերցրել են այն ընթերցա- նությունների խորհրդից, որ ընթերցվեց այսօր Դին Կրակարանից, Նոր Կրակարանից և հավրկապես Ավելքարանից: Ճաշոցում այսօրվա առաջին ընթերցվածը Դուկասու Ավելքա- րանից է, որպես ասվում է, թե Քրիստոս ամեն օր, առավույյան, իշուում էր դաճար, ուսու- ցանում էր ժողովրդին և նրեկոյան առանձնանում և բարձրանում էր Զիթենյաց լեռը: Այդ ժամանակ մարդիկ, որոնք հավաքված էին այնպես, ավելքարանիցը չի ասում, թե ովքեր էին նրանք, սակայն հավանաբար այն ժամանակվա հրեա ժողովրդի մեջ աչքի ընկնող փարիսեցինները, դպիրները, օրենքի մարդիկ, Քրիստոսին ասում են, թե փես՝ ինչպիսի փա- ռավոր դաճար ենք մենք կառուցեն Ասպծո համար: Տաճար, որի նմանը չկա իրենց երկրութ:

Քրիստոս սակայն ասում է՝ կզա ժամանակը, երբ այս փառավոր և շքեղ դաճարի ոչ մի քարը մյուս քարի վրա չի մնա, և խորհրդանշական է, որ այսօր մեր Եկեղեցու հայրերն այս Ավելքարանի ընթերցման կողքին դրել են նաև Եսայի մարգարեից Ասպծո այն խոսքը, թե դուք՝ մարդիկ, ինչպիսի դաճար էլ որ կառուցեք Ինձ համար, միևնույն է, դա փոքր է Ինձ դաճար, և Ես այնպես չեմ կարող բնակվել, եթե ձեր սրբերի մեջ Ինձ համար դեղ չկա:

Այսօր Գալսդյան կիրակին է, այսինքն մենք բոլորս սպասում ենք Քրիստոսի Երկրորդ գալսդյանը: Գալսդյան կիրակին է, որովհետև մենք փնտրում ենք ճանապարհը, որ դա- նում է դեպի Ասպծո արքայություն, և սպասում ենք, որպեսզի զա Ասպծո արքայությունը, և մենք, եթե Աստված շնորհ անի, արժանանանք այդ արքայությանը: Սակայն պիտի իմա-

նաեւ, որ Ասրծո արքայոթունն ապագա չէ միայն: Ասրված էր Որդուն ուղարկեց աշխարհ, որպեսզի Նա վերահասրափ Ասրծո արքայոթունը երկրի վրա: Վերահասրափի, որովհետք համոզված եմ, որ Ասրծո արքայոթունը հասրափվեց այս երկրի վրա այն պահին, եթե Ասրված ավարտեց Էր արաքազործությունը, երբ Ասրված սփեղծեց երկինքն ու երկիրը, արևն ու լուսինը, ասդիերն ու ծովը, բնությունը, կենդանական աշխարհը և, ի վերջո, մարդուն:

Սուրբ Գրքի առաջին էջերը երբ բացում ենք, այնքան խոսվում է դրախտի մասին, և մեր պարկերացման մեջ դրախտն այն գրեղն է, որ մեր մահվանից հետո արդարները պիտի գնան, և որ այնպես արդեն ապրում են սրբերը: Դրախտը սակայն կար, դրախտը սփեղծվել է և դրախտն այս երկրի վրա էր: Մեր մարքերի պապճառով մենք մեզ դուրս դրեցինք Ասրծո արքայոթունից: Քրիստոս եկավ ճանապարհը ցույց տալու, թե ինչպես մենք կարող ենք նորից դեպի այդ արքայոթունը գնալ: Երբ նայում ենք Դին և Նոր Կրակարանները և համեմատում, ընդհանրապես այն գուազվորությունն է սփեղծվում, և շարերն են այդ մասին խոսում. թե Դին Կրակարանում ուրիշ Ասրված էր, Նոր Կրակարանում՝ ուրիշ Ասրված, թե Դին Կրակարանի Ասրվածը խիստ Ասրված է, պարզող Ասրված է, արգելող Ասրված է, իսկ Նոր Կրակարանի Ասրվածը բարի է, ներողամիտ է և թույլափու:

Վվեբարանը, որ ընթերցվեց այսրեղ, դուք լսեցիր, թե ինչպես նոյն դպիրները և փարիսեցիները փորձում են Քրիստոսին և ասում. «Լարդապետ, պատվիրաններից ո՞ր մեկն է ավելի կարևորը»: Դուք հիշում եք քասօն պարվիրանները, որ Ասրված Մովսես մարզարեի միջոցով լրվեց մարդկությանը՝ քարե դրախտակների վրա ասրվածային զրերով դրոշմված. մի զողանար, մի սպանիր, մի շնար և այլն, և այլն: Քրիստոս դրանցից ոչ մեկը ժիշտարակեց, Նա ասաց, որ ամենամեծ պարվիրանը՝ սիրիք քը Ասրծուն, և երկրորդ պարվիրանը՝ սիրիք քը հարազարին, քը կողքի կանգնած մարդուն:

Ասրված երբ սփեղծեց աշխարհը և սփեղծեց դրախտը, Նա ոչինչ չարգելեց և Աղամին ու Եվային ասաց՝ վայելեք, տիրեցեք: Միայն մի արգելք դրեց Ասրված, որ այս զիրության ծառից չուփեք, սակայն մարդը փոխանակ վայելելու այն ամեն պարզւները, որ գրված էին իրեն, կարարեց այն, ինչ որ իրեն արգելված էր. ուստի ոչ թե Դին Կրակարանի Ասրվածն է դարբեր, այլ Ասրծո վերաբերմունքը փոխվեց մարդկանց նկարմամբ, մեղավոր մարդկանց նկարմամբ, և Ասրված սկսեց արգելվներով խոսել. մի՛ արա այս, մի՛ արա այն: Քրիստոս եկավ մարդկանց կոչ անելու, փոխելու և ասելու. երբ դուք սիրեք Ասրծուն, երբ դուք սիրեք ձեր նմանին, դուք այլևս չեք կարող այդ վասր բաները անել, և ձեր ամբողջ գործողությունները պիտի լինեն դրական և ոչ թե ժխտական, և այս խոսքերը այժմնական են, հավիտենական են այս խոսքերը, դրանք ժամանակի համար չեն ասված:

Երբ հարցրեցին Քրիստոսին, թե Ե՞րբ նորից պիտի զաս, Ե՞րբ պիտի լինի Քո Երկրորդ զալուսպը, Քրիստոս զգուշացրեց, որ շատ ժամանակներ կանցնեն, պատերազմներ կիխնեն, ջրիեղեղներ, երկրաշարժեր, այդ բռնորդից հետո կզան մարդիկ, որոնք կատեն, թե ես եմ Քրիստոսը և եկել եմ, սակայն նրանք սուր մարզարեներ են և չափութեք է նրանց հավաքալ, և նորից կլիխնեն պատերազմներ և երկրաշարժեր, և մի օր կզա Ասրծո Որդին ամբողի վրա նստած:

Այս խոսքերը մեզ չպետք է շփոթության մեջ զցեն և ասեն, թե իննոց այդ պատերազմները նղակ, ուրեմն Քրիստոս պիտի գա, որովհեքոն Նոր Կրտակարանի մեջ բազմաթիվ քեղեր հսկակորեն նշված է, որ ոչ ոք չպետք է իմանա և ոչ ոք չզիտի, թե երբ պիտի գա Քրիստոս։ Քազմաթիվ առակներ և պատմություններ կան այդ մասին։ Սակայն Քրիստոս կարող է զալ իննոց այսօր, կարող է զալ և բնակվել մեր սրբի մեջ։ Դա կնշանակի, որ Աստծո արքայությունը մեզ համար արդեն եկել է, և մեր կոչն է, Եկեղեցու կոչը, այսօրվա կիրակի օրվա խորհուրդի կոչը, սիրելի հավաքացյաննը. չսպասենք այն օրվան, երբ Քրիստոս պիտի գա և հասպատի Աստծո արքայությունը, այլ այսօրվանից փորձենք քերել Աստծո արքայություննը, վերահասպատել Աստծո արքայությունն այս երկրի վրա, վերահասպատել մեր հոգիներում, մեր սրբերում, որովհեքոն Աստված ասաց. «Ամենափառավոր բաճարների մեջ Ես կարող է քրնակվեմ, եթե դա ազնիվ նպատակով չի կառուցված, այլ կրնակվեմ ամենաաղքաբ մարդու մեջ»։

Քրիստոնեության պատմության ընթացքում հաճախ շաբերը մոռացել են խկական իմաստը Քրիստոսի խոսքերի և փարիսեցիների նման զնացել բառի հետևից։ Երբ մենք բացում ենք մեր սրբերի վարքերը և ընթերցում, այնինդեմ բազմաթիվ պատմություններ կան, որոնք այժմնական են և որոնք այսօր դաս կարող են լրաց մեզ։ Ես ցանկանում եմ իմ քարոզն ավարտել նման մի պատմությամբ։ Վերսանդրիայում մի մեծահարուստ ընդամենք է լինում, որ ծնողները մահանում են։ Երկու զավակներ են մենում մի դղյա և մի աղջիկ։ Երկուսն էլ քրիստոնյա են լինում։ Տղան հայրական ժառանգության իրեն հասանելիք մասը բաժանում է աղքադներին և զնում Թեքրայի անապատները՝ ճգնելու, աղոթքով, ծոմապահությամբ արժանանալու Աստծո արքայությանը։ Աղջիկը մնում է մենակ և խարգում է աշխարհիկ կյանքից, խարգում է երիկասարդների հմայքներից և սկսում է անառակ կյանք վարել։ Եվ մի գիշեր Աստծո հրեշտակը զայխու է այդ դղյայի մոտ և ասում ինձ պետք չեն քո աղոթքները, ինձ պետք չեն քո ճգնությունները, եթե քո քույրը սարանայի բաժին է դառնում, և դու ոչինչ չես ամուս նրան փրկելու համար։

Սիրելի հավաքացյալներ, ես կարծում եմ, բավարար են այս պատմությունները, որպեսզի մենք անդրադառնանք, թե ինչ է ցանկանում մեզանից Աստված, որպեսզի մենք բացենք մեր սրբերը ոչ միայն Աստծո նկարմամբ, այլ նաև մեր դրացու նկարմամբ, մեր եղբոր, մեր հարևանի, մեր թշնամու։ Թշնամու հետք կարելի է հարակու թշնամություն անել, սակայն թշնամուն կարելի է բարեկամ դարձնել, և քրիստոնյան զիտի, որ այդ բարեկամ դարձնելու բանալին մեր ձեռքում է զգնվում, պարզապես մնում է, որ մենք վերցնենք, այդ բանալիով բացենք դուռը, և մեր առջև կրացվի այն ճանապարհը, որ փանում է դեպի Աստծո արքայություն։

«Ընորիք Տեսառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենասեանդ Ամէն»։